ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
BRANCH UNION OF TRADE COMMITTEE OF HIGHER INSTITUTIONS OF ARMENIA

Երևան, 375010, Վ. Սարգսյան 26/3, ս. 504
Հեռ. 58 72 17
Ֆաքս 52 04 45
E-mail: steesagarnik@yahoo.com

Yerevan, 375010, V. Sargsyan 26/3, r. 504
Tel. 58 72 17
Fax. 52 04 45
E-mail: steesagarnik@yahoo.com

«21» մայիսի 2018թ.

№ 3/5

Հայաստանի Հանրապետության
Կրթության և գիտության նախարար
պարոն ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Դ Ի Մ Ու Մ

Հարգարժան նախարար

Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունը հայտարարել է մրցույթ՝ ՀՀ կրության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընգրկվելու համար:

Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը նախկինում ներկայացված չի եղել ՀՀ ԿԳ նախարարին կից ձևավորված հասարակական խորհրդի կազմում:

Ներկա քաղաքական իրողության պայմաններում բուհական համակարգի դերն ու նշանակությունը առավել արդիական են դառնում և ոլորտում աշխատողների սոցիալական շահերի պաշտպանությունը՝ առաջնային:

Կարևորելով ՀՀ ԿԳ նախարարության հետ առավել սերտ համագործակցությունը՝ ցանկալի է, որպեսզի վերը հիշատակված հասարակական խորհրդի կազմում ընգրկվի նաև Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը:

Մրցույթին մասնակցելու համար կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը:

Հարգանքով՝

Նախագահ՝ Գ. Վաղարշակյան **Գառնիկ Վաղարշակյան**

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 15099/8
«22» 05 2018թ.

Տպագրված է 2 /երկու/ օրինակ

Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հայաստանի Բուհերի արհեստակցական
կազմակերպությունների ծյուղային հանրապետական
միության 3-րդ համագումարի որոշմամբ

18 մայիսի 2012թ.

Նախագահ՝ Գ. Վաղարշակյան

ԳՐԱՆՑՎԱԾ է

Պետական ռեգիստրի կողմից 11.11.2002թ.
Գրանցման համարը 211.150.01349
Պետական գրանցման վկայականի
համարը՝ 03Ա056707
Հարկ վճարողի հաշվառման համար 02565052
11.11.2002թ. գրանցված կանոնադրություն
թիվ 001-3 փոփոխությունը գրանցված է

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից
«08» 06 2012թ.
Պետական ռեգիստրի ղեկավար՝
Ա. Գևորգյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Բուհերի արհեստակցական կազմակերպությունների ծյուղային հանրապետական միության

/փոփոխություն, լրացում/

Ք. Երևան 2012թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ ԳԱՌՆԻԿ ՎԱՂԱՐՇԱԿՅԱՆ

Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը հանդիսանում է Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիայի հիմնադիր անդամ: Որպես ՃՀՄ նախագահ հանդիսանում եմ ՀԱՄԿ-ի գործկոմի անդամ:

Հանդիսանում եմ Միջին Կրթության Ուսուցման Զարգացման Ազգային Խորհրդի (ՄԿՈՒԶԱԽ) և Ուսուցման Ազգային Հիմնադրամի անդամ:

Մասնակցություն եմ ունեցել հանրապետության տարբեր բուհերի արհմիութենական կոնֆերանսներին, հանդիպումներ եմ ունեցել բուհերի ռեկտորների հետ, մասնակցել եմ աշխատավորական կոլեկտիվների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումների:

Անցած 2 տարվա ընթացքում ունեցել եմ կրթահամակարգին և սոցիալական հիմնահարցերին վերաբերող ավելի քան 120 հրապարակումներ Հայաստանի և միջազգային տարբեր լրատվական ԶԼՄ-ներում:

Մասնակցել եմ Բրյուսելում, Մոսկվայում, Սոչիում, Թուրինում կազմակերպված միջազգային տարբեր կոնֆերանսների և աշխատաժողովների աշխատանքներին:

Հանդիսանում եմ տարբեր քոլեջների և նախնական արհեստագործական ուսումնարանների կառավարման խորհուրդների անդամ:

Առաջնորդել եմ Աշխատանքի օրվան և Արժանապատիվ աշխատանքին նվիրված երթերը:

Հայաստանի բուհերի արհեստակցական
կազմակերպությունների ճյուղային
հանրապետական միության նախագահ
Գառնիկ Վաղարշակյան

Ներկայացնում եմ ՀՀ կրության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդում ներգրավման վերաբերյալ իմ պատկերացումները:

- Կրթության համակարգը համարվում է պետության անվտանգության շերտ, որին առնչվում է հասարակության ամեն մի ընտանիք:
- Կրթության ոլորտի զարգացումը ուղիղ ձևով փոխկապակցված է տնտեսության զարգացման հետ:
- Առայժմ ամբողջությամբ հստակեցված չէ տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, թեպետև նշմարվում է հանքարդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և տուրիզմը:
- Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումները ու հիմնախնդիրները չեն ներկայացվում տնտեսության զարգացմամբ գերակա ուղղություններով:
- Անկախացումից հետո կրթահամակարգի կառավարումը մշտապես եղել է իշխող կուսակցության քաղաքական մենաշնորհը, որն իր հետքն է թողել ոչ միայն ոլորտի հետագա ճակատագրի վրա:
- Անկախացումից հետո համակարգում փոխվել է 15 նախարար: Նրանք փորձել են համակարգը կառավարել իրենց կուսակցության պատվերով՝ բարեփոխումների քողով:
- Առանձնակի կարևորվում է բուհի կառավարման մոդելի փոփոխության անհրաժեշտությունը: Աննպատակահարմար է բուհերի կառավարման խորհուրդներում ներգրավել պետական այրերի և պատգամավորների:
- Երիտասարդ գիտնականը պետք է ունենա իր արժանի տեղը բուհի ղեկավար պաշտոններում:
- Արհեստակցական կազմակերպությունը հանդիսանում է բուհում գործող աշխատավորության սոցիալական շահերի պաշտպանն ու գործատու-աշխատող փոխհարաբերություններում ներկայացուցիչը:

ՀՀ կրության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու պարագայում հնարավորություն կունենամ առավել մանրամասը և առարկայական ներկայացնել իմ պատկերացումները բուհական համակարգում արհեստակցական կազմակերպությունների դերակատարման ոլորտությամբ: